## Տ. ԱՍՈՂԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ



Ծնվել է 1959 թ. Էջմիածնի շրջանի Հայթաղ գյուղում: Ավազանի անունը եղել է Սմբատ:

1976 թ. բարձր առաջադիմությամբ ավարտել է ծննդավայրի միջնակարգ դպրոցը և նույն տարին ընդունվել Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1980 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնի օրը, ձեռամբ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1982 թ. փայլուն հաջողությամբ ավարտել է հոգևոր ճեմարանի լրիվ դասընթացը և հաջորդ տարվա մարտ ամսին, հոգևոր ճեմարանի հարկի տակ, պաշտպանել «Գրիգոր Նարեկացին և Թոնդրակյան շարժումը» թեմայով իր ավարտաճառը՝ արժանանալով «գերազանց» գնահատականի:

1983 թ. հոկտեմբերի 16-ին Մայր տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի:

1983 թ. մինչև 1985 թ. կատարել է Վեհափառ Հայրապետի գավազանակրի պաշտոնը:

1985 թ. Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ հայր Ասողիկը մեկնել է Փարիզ՝ իր ուսումը կատարելագործելու: Այժմ նա սովորում է Փարիզի «Institut catholique»-ի աստվածաբանական ֆակուլտետում, ինչպես նաև իր ծառայությունն է բերում տեղի համայնքին:

Հեղինակ է չորս բանաստեղծական ժողովածուների («Աստվածամայր», 1986, Փարիզ, «Էջմիածին», 1986, Վենետիկ, «Փշե ծաղիկ, քավության ցող», 1987, Վենետիկ, «Երկինք, սեր, հույսեր», 1987, Փարիզ):